# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/42» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 08 » « հոկտեմբերի » 2018թ.**
**ժամը 14:00**

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) | Ռ.Չոբանյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | Մ.Այդինյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | Է.Միերյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | Հ.Հովհաննիսյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | Ա.Փաշայան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) | Լ.Ջոհրաբյան |

## 1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/42» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

----------------------------------------------------------------------------------------------------

(Ռ.Չոբանյան)

1.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/42» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2018 թվականի հոկտեմբերի 8-ին, ժամը 14:00-ին, բնապահպանության նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/42» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/42» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 1-ին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Պատրոն ՌՄ» ՍՊ, «Կոմպասս» ՍՊ, «Փի-Սի էլեկտրոնիկս» ՍՊ, «Ինթեչ» ՍՊ ընկերությունների ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

## 3. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/42» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

----------------------------------------------------------------------------------------------------

(Ռ.Չոբանյան)

3.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ իր կողմից հաստատված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են բնապահպանության նախարարության gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. Հանձնաժողովը որոշեց՝

----------------------------------------------------------------------------------------------------

(Ռ.Չոբանյան)

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները չափաբաժիններ 1-ով և 2-ով հաղթող ճանաչել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի, չափաբաժին 3-ով՝ «Կոմպասս» ՍՊԸ-ին, չափաբաժին 4-ով՝ «Փի-Սի էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին, չափաբաժին 6-ով՝ «Ինթեչ» ՍՊԸ-ին:

4.2. Պայմանագրի կնքման նպատակով «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/42» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին՝ անգործության ժամկետի ավարտից հետո, ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

4.3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) ____________ Ռ. Չոբանյան

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) ____________ Մ.Այդինյան

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) ____________ Է.Միերյան

Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) ____________ Հ.Հովհաննիսյան

Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) ____________ Ա.Փաշայան

Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) ____________ Լ. Ջոհրաբյան